ՀԿԿ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2025 թվականի հունվարի 20-ին տեղի է ունեցել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի (հետայսու՝ ՀԿԿ նախագահ) թեկնածուների ընտրության համար Կառավարության կողմից հայտարարած մրցույթի հարցազրույցի փուլը։

Մրցույթի անցկացման անհրաժեշտությունը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ 2024թ.-ի նոյեմբերի 18-ից ՀԿԿ նախագահի պաշտոնը թափուր էր մնացել[1], որի համալրման նպատակով հայտարարվել էր մրցույթ։

«Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպությունը մրցույթին մասնակցել է որպես դիտորդ՝ ի դեմ կազմակերպության իրավաբան Անահիտ Մկրտչյանի։

Մրցույթին ներկա են եղել նաև ԶԼՄ-ների ներկայացուցիչներ, ընթացքը հեռարձակվել է ուղիղ եթերով[2]։

Մրցութային խորհրդի ձևավորում և կազմ

Ընտրության կազմակերպման նպատակով «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածով սահմանված կարգով ձևավորվել է մրցութային խորհուրդ։ Մասնավորապես՝ 2024 թվականի դեկտեմբերի 11-ին Կառավարությունում տեղի է ունեցել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար ձևավորված մրցութային խորհրդի նիստը, որի ընթացքում հայտնի է դարձել նաև խորհրդի կազմը։ Ըստ այդմ, մրցութային խորհրդում ընդգրկված են՝

- ՀՀ գլխավոր դատախազության հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ Էդգար Արսենյանը,
- Ազգային ժողովի նախագահի խորհրդական Ահարոն Ներսիսյանը,
- Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչության պետ Եփրեմ Կարապետյանը,
- Բարձրագույն դատական խորհրդի անդամ Կարեն Թումանյանը,

[1] Կոմիտեի նախորդ նախագահ Սասուն Խաչատրյանը պաշտոնից ազատման դիմում էր ներկայացրել https://www.azatutyun.am/a/sasoun-khachatryann-azatman-dimum-e-grel/33206102.html

[2] FactorTV, Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուի ընտրության հարցազրույցը Կառավարությունում, հասանելի է https://www.youtube.com/watch?v=6INSBlP6VwY

- «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության հիմնադիր Դանիել Իոաննիսյանը,
- Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի իրավաբանական բաժնի համակարգող Անի Չատինյանը

Հատկանշական է, որ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» ՀՀ օրենքով Խորհրդի կազմում նախատեսված է նաև ներկայացուցիչ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմից, ինչը, սակայն, չի ապահովվել։

Մրցույթային խորհրդի կազմի և հարցազրույցի անցկացման հետ կապված հարկ է նշել, որ խորհրդի անդամները միմյանց նկատմամբ դրսևորել են անհարգալից վերաբերմունք, կասկածի տակ դրել միմյանց մասնագիտական գիտելիքները, նախագահը պարբերաբար սահմանափակել է անդամի հարցեր տալու իրավունքը, հեռացրել կրկնվող հարցերը, մի քանի անգամ անջատել անդամի բարձրախոսը, նախագահը բարկացել է, որ անդամը հնչեցրել է հարցեր, որոնց մասին նախապես չի իրազեկել խորհրդի մյուս անդամներին, բացի այդ խորհրդի նախագահը հնչեցրել է ԿԿՀ-ի եզրակացության եզրափակիչ մասը, ինչը ըստ մյուս անդամի օրենքով անթույլատրելի է եղել՝ այդպիսով կասկածի տակ դնելով Մրցութային խորհրդի պրոֆեսիոնալիզմն ու էթիկան։

Մրցույթին դիմած թեկնածուն

Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների ընտրության համար Կառավարության հայտարարած մրցույթին դիմել է միայն մեկ անձ՝ Ռաֆայել Երիցյանը, ով դիմելու պահին զբաղեցրել է ՀՀ Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) տնտեսական անվտանգության և կոռուպցիայի հակազդման գլխավոր վարչության պետի պաշտոնը։

Մրցույթի անցկացում

Հարցազրույցի և արդյունքների ամփոփման փուլերն անցկացվել են նույն օրը՝ 2025 թվականի հունվարի 20-ին։ «Հակակոռուպցիոն կոմիտեի մասին» օրենքով սահմանված է նաև հարցազրույցի փուլի ընթացքն ու ստուգման ենթակա հանգամանքները։ Մասնավորապես, հարցազրույցը ներառում է հետևյալ փուլերը՝

- *տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ ղեկավարման և կառավարչական հմտություններին տիրապետելու, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները (ինքնատիրապետումը, վարվեցողությունը,*

- ունկնդրելու կարողությունը, հաղորդակցման հմտությունները պաշտոնական և արտապաշտոնական հարաբերություններում, վերլուծական կարողությունները և այլն),

- համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ (օրենքի կամ այլ իրավական ակտի նորմի, դատական ակտում արտահայտված դիրքորոշումների և այլն) թեկնածուի կողմից իրականացվող վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ կարճ ժամանակահատվածում հանպատրաստից կողմնորոշվելու, ինքնատիրապետման, վարվեցողության, հաղորդակցման հմտությունները, վերլուծական կարողությունները և տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ որակները գնահատելու համար,

- արդյունքների ամփոփման փուլ՝ Խորհրդի յուրաքանչյուր անդամի տրամադրվում է հարցաթերթ, որտեղ նշվում են գնահատման ենթակա հատկանիշները: Խորհրդի յուրաքանչյուր անդամ գնահատում է յուրաքանչյուր թեկնածուի՝ նշելով իր նկատառումները գնահատվող հատկանիշների վերաբերյալ: Հարցազրույցի արդյունքներով Խորհուրդը կազմում է մրցույթում հաղթող ճանաչվածների ցուցակ, որտեղ ներառվում են միավորների հանրագումարի արդյունքով առավելագույն միավորներ ստացած առնվազն երկու և առավելագույնը երեք թեկնածուները, բացառությամբ այն դեպքերի, երբ մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել մեկ թեկնածու:

Հարցազրույցի փուլում Խորհուրդը հարցերի միջոցով, սահմանված կարգով, ստուգել է թեկնածուի՝ տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ ղեկավարման և կառավարչական հմտություններին տիրապետելու, ինչպես նաև տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար անհրաժեշտ այլ անձնական հատկանիշները (ինքնատիրապետումը, վարվեցողությունը, ունկնդրելու կարողությունը, հաղորդակցման հմտությունները պաշտոնական և արտապաշտոնական հարաբերություններում, վերլուծական կարողությունները և այլն), համապատասխան մասնագիտացման ոլորտում մեկ հակիրճ իրավական հարցի վերաբերյալ թեկնածուի կողմից իրականացվել է վերլուծություն ու դիրքորոշման ներկայացում՝ անհրաժեշտ որակները գնահատելու համար:

Հարցեր են տրվել 3 թեմաներով, որոնք գնահատվել են հետևյալ կերպ.

1. անձնական որակներ՝ 30 միավոր,
2. բարեվարքություն՝ 40 միավոր,
3. պաշտոնը զբաղեցնելու համար անհրաժեշտ մասնագիտական փորձ և հմտություններ՝ 30 միավոր:

Այսինքն, յուրաքանչյուր անդամ հնարավորություն է ունեցել թեկնածուին գնահատել առավելագույնը 100 միավորով:

Այսպես, Խորհրդի նախագահը, նախ, առաջարկել է հարցեր տալու ընթացակարգը, ըստ որի խորհրդի մեկ անդամ ամբողջությամբ հնչեցնում է իր բոլոր հարցերը, ապա մյուսը, որպեսզի ավելի արդյունավետ լինի, սակայն անդամները նշել են, որ հնարավոր է ընթացքում ևս հարցեր ծագեն իրենց մոտ, ինչը ընդունվել է:

Խորհրդի անդամների կողմից անձնական որակների ստուգման շրջանակներում հարցեր են հնչեցվել հետևյալի մասին.

- ՀԿԿ-ի ներքին վերահսկողության մասին: Թեկնածուն նշել է, որ կա ներքին անվտանգության վարչություն, որը զբաղվում է դրանով, բացի այդ, ըստ թեկնածուի, բոլորը մրցույթով են անցել, բարեվարքությունն անցած են:
- ՀԿԿ-ում պաշտոն զբաղեցնող ԿԿՀ-ի բացասական եզրակացություն ունեցող անձանց աշխատանքից հեռացնելու վերաբերյալ: Թեկնածուն նշել է, որ ծանոթ չէ Կոմիտեի աշխատակիցներին, երբ կիմանա ինչի մասին է բացասական եզրակացությունը, ըստ այդմ կկարողանա պատասխանել:
- Օպերատիվ և քննչական ստորաբաժանման համատեղ լինելու առավելությունները: Թեկնածուն նշել է, որ ՀԿԿ-ն բնույթով միակն է, սակայն իր ԱԱԾ փորձից կարող է ասել, որ արդյունավետ է գործում:
- ՀԿԿ նախագահի պաշտոնում ընտրվելու թեկնածուի մոտիվացիան, կոռուպցիայի նկատմամբ վերաբերմունքը: Թեկնածուն նշել է, որ շարժառիթը գործընկերների հետ միասին կոռուպցիայի դեմ պայքար մղելն է, որ ՀԿԿ-ում ավելի հնարավոր է: Ըստ թեկնածուի՝ կոռուպցիան խարխլում է պետության հիմքերը, պետությունն ունի հակակոռուպցիոն ռազմավարություն, որը պետք է կատարել:
- ՀԿԿ-ում աշխատանքի առաջնահերթությունները: Թեկնածուն նշել է, որ պետք է գործիքակազմեր ներդնել, օրինակ՝ պարեկային ծառայողի վրա տեսախցիկ ամրացնելը կանխեց կոռուպցիայի դեպքերը:
- Փոքր խախտումները, օրինակ՝ 1000 դրամի արժի՞ համարել կոռուպցիա: Թեկնածուն պատասխանել է, որ գումարի չափի տարբերություն չկա: Փոքր կոռուպցիա չկա, ձու գողացողը ձի էլ կգողանա:

- Ի՞նչ կարծիք ունեք վարչական իրավախախտումների վերաբերյալ, օրինակ, երկրորդ շարքում մեքենա կանգնեցնելը: Թեկնածուն պատասխանեց, որ պետք է օրենքով սահմանված կարգով տուգանվի:
- Խորհրդի անդամներից մեկին զարմացրել է այն հանգամանքը, որ թեկնածուն չունի որևէ ՃՈ խախտում, և հետաքրքրվեց, թե ինչն է պատճառը, հնարավո՞ր է, որ Տոյոտա Քեմրի մեքենայի վրա այլ կեղծ պետհամարանիշներ դրված լինեն: Թեկնածուն նշեց, որ պետք է օրենքով վարել: Բացի այդ իր սեփական մեքենան վարում է միայն շաբաթ-կիրակի օրերին, բացառվում է, որ իր մեքենայի վրա կեղծ համարանիշներ լինեն: Պատասխանից հետո խորհրդի անդամ Դանիել Իոաննիսյանը ցույց տվեց լուսանկար, որում թեկնածուի մեքենայի վրա կեղծ, գոյություն չունեցող համարանիշներ էին, մեքենան կայանած է եղել թեկնածուի բնակարանի ավտոկայանատեղիում: Թեկնածուն նշեց, որ մեքենան օգտագործում է նաև աշխատանքի նպատակով, ուստի հնարավոր է, որ նկարը կատարվել է այն պահին, երբ մեքենայով իրականացվել է օպերատիվ-հետախուզական գործունեություն: Այդ պահին մտել է տուն հանգստանալու:
- Խորհրդի նույն անդամը հետաքրքրվել է, որ թեկնածուի մեքենայի նստատեղի վրա ամրացված է եղել խլացուցիչ/զագլուշկա/, որի մասին կա լուսանկար, արդյոք դա նշանակում է, որ առանց ամրագոտի է մեքենան վարում: Թեկնածուն նշեց, որ դա դուրս է գալիս և մտնում, մշտական այդտեղ չի, դա մեքենայի մեջ է եղել գնելիս:

Հարցեր բարեվարքության վերաբերյալ.

- Խորհրդի անդամի կողմից հարց է հնչեցվել թեկնածուի Դպրաբակ գյուղի արոտավայրի, հողի, տան վերաբերյալ, ինչին թեկնածուն պատասխանեց, որ պապիկից է ժառանգություն ստացել: Խորհրդի մեկ այլ անդամ հարց հղեց, թե ինչու վերջինիս ծնողներն ու քույրը 2018թ.-ին հայտարարագիր չեն ներկայացրել: Թեկնածուն սկզբում բացառեց, նշեց, որ նման պահանջ չի եղել այդ ժամանակ, հետագայում քննարկման ընթացքում՝ դատախազ անդամի պարզաբանման արդյունքում բացահայտվեց, որ թեկնածուն այդ ժամանակահատվածում շուրջ 6 ամիս միայնակ է ապրել վարձակալությամբ, ուստի ընտանիքի անդամները հայտարարագիր ներկայացնելու պարտավորություն չեն ունեցել:
- Հաջորդիվ քննարկվել են նաև թեկնածուի ավանդների և դրամական միջոցների ծագման վերաբերյալ հարցեր: Թեկնածուն նշել է, որ ավանդները դրվել են շատ վաղուց, 2010թ.-ից և ծագել են հոր աշխատանքի խնայողություններից, մեղվապահությունից ստացված գումարներից: Նշեց նաև, որ եթե ընտանիքի անդամներից մեկի ավանդը ավելացել է, ուրեմն մյուսինը իջել է, ինչին Խորհրդի անդամը պատասխանեց, որ այդպես չէ, նվազում չկա մյուս

ավանդներից: Մեղվապահությունից ստացված եկամտի մասով Խորհրդի անդամը հարցրեց, թե 35 փեթակից 2,500,000 մլն դրամ և ավելի գումար ինչպես է հնարավոր ստանալ: Հանձնաժողովի մյուս անդամը նշեց, որ իրենք ևս մեղվապահությամբ են զբաղվել, սակայն այդքան եկամուտ չի ստացվել: Թեկնածուն պատասխանեց, որ նպաստավոր պայմաններում մեղուները կարող են շատ մեղր ապահովել:

- Հարց է բարձրացվեց նաև թեկնածուի կանխիկ միջոցների մասին, ինչը կազմել է շուրջ 14 միլիոն դրամ: Թեկնածուն բացատրել է, որ ընտանիքում պետք է լինի կանխիկ գումար հրատապ ծախսերի համար:
- Խորհրդի կողմից թեկնածուի տարեսկզբյան և տարեվերջյան ֆինանսական անհամապատասխանության մասով թեկնածուն նշել է, որ դա տեխնիկական վրիպակ է:
- Հարց է հնչեցվել նաև թեկնածուի քաղաքական կամ քրեական ենթամշակույթին հարելու կամ ազդեցության մասին, ինչին պատասխան վերջինս նշեց, որ նման ճնշումներ երբևէ չի եղել:
- Հաջողիվ քննարկվել է նաև թեկնածուի կողմից մեքենաների վաճառքի հարցը, մասնավորապես, վերջինս վաճառել է «ՎԱԶ» մակնիշի մեքենա և գնել «Լեքսուս» մակնիշի, որոնք, սակայն, չեն արտացոլվել հայտարարագրում: Թեկնածուն նշել է, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նման խնդիր չի արձանագրել և երբևէ իրեն նման հարցեր չի առաջադրել: Ավելին, ԱԱԾ ընդունվելիս ևս անցել է բարեվարքության ստուգում և բարեվարքության խնդիր չի հայտնաբերվել: Այս առնչությամբ Խորհրդի անդամներից մեկը նշել է նաև, որ մեկ այլ մեքենա օտարվել է կասկածելի ցածր գնով (Տոյոտա Քեմրին 2,500,000 ՀՀ դրամով):
- Խորհրդի անդամ Դանիել Իոաննիսյանը հարց է հղել նաև «Մարտի 1-ի գործի»[3] առնչությամբ: Մասնավորապես, այն մասին, թե արդյո՞ք թեկնածուն ճանաչում է Ավետիք Աթաբեկյանին, քանի որ որոշ աղբյուրներից տեղեկություններ է ստացել այն մասին, որ թեկնածուն այդ անձին իրավական խորհրդատվություն է տրամադրել այն մասին, թե ինչպես խուսափի քրեական պատասխանատվությունից: Թեկնածուն պատասխանեց, որ եթե նման բան կա, այդ տեղեկատվությունը փոխանցած անձը պետք է հայտնի դառնա, հաղորդում ներկայացնի հանցանքի մասին, իսկ եթե իրականում նման փաստ չկա, վատ երևույթ է մրցույթին նման հարց տալը, այն պետք է ունենա իր հետևանքները: Թեկնածուն հորդորեց խորհրդի անդամին

[3] Տե՛ս, օրինակ՝ https://hy.wikipedia.org/wiki/%D5%84%D5%A1%D6%80%D5%BF%D5%AB_1-%D5%AB_%D5%AB%D6%80%D5%A1%D5%A4%D5%A1%D6%80%D5%B1%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6%D5%B6%D5%A5%D6%80, https://factor.am/812334.html, https://www.1in.am/3447290.html

բացահայտել տեղեկատվության աղբյուրը, սակայն Մրցութային խորհրդի անդամ Դանիել Իոաննիսյանը նշեց, որ քաղաքացիներն այդ տեղեկությունն իրեն փոխանցել են համացանցի միջոցով, միմյանց միջև ձևավորված փոխվստահության հիման վրա: Թեկնածուն հավելեց, որ «Եթե իհարկե հանձնաժողովը դրական եզրակացություն տա և ինքը ընտրվի ՀԿԿ նախագահ, այս տրամաբանության մեջ հետաքրքիր կլինի ներկայացված հաղորդումը քննելը, հատկապես, որ մարտի 1-ի գործը ՀԿԿ-ում է»:

Այս քննարկմանը հաջորդել է թեկնածուի մասնագիտական փորձի և հմտությունների ստուգումը, ինչի համար տրվել են հետևյալ հարցերը.

- *Ի՞նչ հետևանք է առաջացնում Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ օրենքով սահմանված՝ նախընտրական քարոզչության ծախսերը նախընտրական հիմնադրամից չկատարելը կամ հանրաքվեի քարոզչության ծախսերը հանրաքվեի քարոզչության ֆինանսավորման հիմնադրամից չկատարելը կամ հայտարարագրման ենթակա տվյալները չհայտարարագրելը կամ հայտարարագիր չներկայացնելը:* Թեկնածուն պատասխանել է, որ նկարագրվածը կոռուպցիոն հանցագործություն է, սուբյեկտիվ կողմից ուղղակի դիտավորությամբ կատարվող: Սա ուղղված է օբյեկտիվ ընտրությունների դեմ և ծանր է այն առումով, որ ուղղված է ընտրությունների դեմ, պետք է պատժել:
- Անդամներից մեկը որպես հարցի շարունակություն, խնդրել է նկարագրել նմանատիպ իրավիճակ, ինչին ի պատասխան թեկնածուն նշեց, որ հիմնադրամից դուրս տարբեր մարդիկ կարող են ծախսեր կատարել իրենց օգտին:
- Հաջորդիվ հնչեցվել է հետևյալ հարցը՝ *եթե տարածքը անհատույց տրվել է կուսակցությանը 3 ամսով, այդ արարքը որ դեպքում է կարող է համարվել քրեորեն հետապնդելի:* Թեկնածուն պատասխանեց, որ պետք է տարածքն էլ հիմնադրամի ծախսերով պահվի, այլապես այն քրեական է: Հարց հնչեցրած անդամը նշեց, որ պատասխանը սխալ է, քանի որ որ նշված օրինակում նվիրատվությունների չափերի, գույքի հետ կապված հարցերը քրեական հանցանքի տարրեր չեն կրում, նման հոդված չկա քրեական օրենսգրքում, ուստի թեկնածուն չի տիրապետում օրենսդրությանը: Թեմայի քննարկումը, սակայն, շարունակվեց, և հարց հնչեցվեց, թե նկարագրված հանցանքի ինչպիսի առանձնահատկություններ կարելի է առանձնացնել: Թեկնածուն իր հերթին նշեց, որ անհրաժեշտ է պարզել, թե հիմնադրամը ինչքան գումար, ում կողմից է ստացել, հիմնադրամի ծախսերը և այլն, քննություն պետք է կատարվի: Խորհրդի անդամը նշեց, որ առանձնահատկությունը ընտրական հանցանքների դեպքում նաև սուղ ժամկետներում քննությունն է:
-

Հարցազրույցի ավարտին խորհրդի անդամ Դ. Իոաննիսյանը լուսանկարով ցույց տվեց, որ Ռաֆայել Երիցյանի՝ օպերատիվ համարներով անձնական մեքենան հարցազրույցի ընթացքում կանգնած է եղել ճանապարհի վրա՝ 2-րդ շարքում՝ նման կերպ փորձ անելով ցույց տալ կատարված խախտումը։

Արդյունքների ամփոփում

Հարցերից և քննարկումից հետո մրցութային խորհուրդը հեռացավ գնահատման և արդյունքների ամփոփման համար։ Նախապես որոշված 10-20 րոպեի փոխարեն՝ մոտ մեկ ժամից ավելի տևած քննարկման արդյունքում Մրցութային խորհրդի նախագահ, ԲԴԽ անդամ Կարեն Թումանյանը հայտարարեց, որ Ռաֆայել Երիցյանը բավարար չափով միավորներ չի հավաքել (75 տոկոս և ավելի), հետևաբար նրա թեկնածությունը չի ներկայացվի Կառավարությանը։ Թեկնածու Ռաֆայել Երիցյանը արդյունքների ամփոփմանը չէր սպասել և հեռացել էր։ Մրցույթի արդյունքներով, փաստացի, ՀԿԿ նախագահ չի ընտրվել։